ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք.Երևան **«30» «մայիսի» 2024թ., ժամը 12:00**

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ՝ Վահե Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝
վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ՝ Արման Ճռիկյան
վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ավագ մասնագետ՝ Սոսե Հակոբյան
վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության վարչատնտեսական բաժնի ավագ մասնագետ՝ Արթուր Խաչատրյան
վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության վարչատնտեսական բաժնի մասնագետ՝ Գուրգեն Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ պետական վերահսկողական ծառայության 29.05.2024թ. թիվ Ե/1290-24 գրությամբ /կցվում է/ հայտնի է դարձել, որ «Ինժեներինգ» ՍՊ ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանի և «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանը 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև օրս հանդիսանում է նաև «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության տնօրեն և բաժնետեր: Միաժամանակ հայտնի է դարձել, որ «ՀՏ-Պրոեկտ» ՍՊ ընկերությունը «Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. « ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների մասին

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

2.1 Չեղարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը և մերժել «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած «Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետը և 121-րդ կետը:

2.2 «ՀՀՎԱ-ՀԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ին:

2.3 Հաստատել գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել

2.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Վահե Խաչատրյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Արման Ճռիկյան	ԳՊ/ԳԱ	
	Սոսե Հակոբյան	ԳՊ/ԳԱ	
	Արթուր Խաչատրյան	ԳՊ/ԲԱ	
	Գուրգեն Պետրոսյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	ԳՊ/ՄՀՄ	